

Տարեկան գիմնը 10 բությ, կես տարվանը 6
Առանձին շամարները 5 կոպեկով:

Ձեփական գրվում են միմիայն Խոմբագրատան մէջ:

(О)ւարաքաղաքացիք դիմում Են ուղղակի
Տիֆլուս. Պետական „Մանօ“

ԻՆԵՐՈՒՄ ՏԱՐԻ



Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Քաղի կիրակի և սօն օրերից)

Յայտաբարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչչելը բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մուսած մունիքները: — Ես եք քի ն տե-
սու թիւն: Ցանկալի վորոխութիւնն: Կամակ Մի-
խայրօպից: Նամակ Աստրախանից: Նամակ Խմբա-
գրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսու-
թիւն: Թիւրքիա: — «Մշակի» հեռազդիքներ: — Յայ-
տարարութիւններ: — Բանասիրական: Սովոր
Հայաստանի մեջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՆՄՈՒՆՔ

ՆԵՐ

Կորելումն անզլիական պար-
լամենտում պատահեց մի անցք,
որ իր վրա ոչ թէ միայն անզլիա-
կան հասարակական կարծիքի ու
լրագրութեան ուշադրութիւնը
դարձրեց, այլ և ամբողջ Եւրօ-
պայիք: Ահա այդ անցքը:

Համայնքների ժողովի մի պատ-
գամաւոր, այն է՝ Կօրտամպտօնի
պատգամաւոր պ. Բրէդլո (Brad-
laugh) չէր համաձայնվում կրօ-
նական երգում տալ, այլ պահան-
ջում էր որ իրան թոյլ տրվի եր-
գվել բաղարականապէս, այսինքն
հասարակ կերպով յայտնել, իր
հաւատարմութիւնը առանց երդ-
վելու մի որ և է կրօնական գրքի
վրա: Բրէդլո պատգամաւորը
պատկանում է անգլիական հան-
րապետական կուսակցութեանը,
իսկ իր համոզմունքով անհաւատ
է համարվում, այսինքն չէ պատ-
կանում ոչ մի կրօնական աղան-

դին, ոչ մի եկեղեցուն։ Տրէդրի
այդ պահանջը մեծ վիճաբանու-
թիւններ յարուցեց համայնքների
ժողովի մէջ։ Ընդդիմադրական
կուսակցութիւնը և նրա առաջ-
նորդ սըր Ատաֆօրտ Կյորթկոս
պահանջում էին որ Տրէդրո ան-
պատճառ երդում տայ, եթէ ոչ
նա պատգամաւոր չը պէտք է ըն-
դունի և իրաւոնք չը պիտի ու-
նենայ նստել համայնքների ժողովի
նստարանի վրա։ Գլադսոն և
նոր մինիստրութիւնը պաշտպա-
նում էին Տրէդրօին։ Առաջին մի-
նիստրը մի երկար ձառ ասեց, որի
մէջ բացատրեց երդման պատմու-
թիւնը Անգլիայում։ Կրօնական
երդումը առաջ մատչելի էր մի-
միայն անգլիկաններին, այսինքն
Անգլիայում տիրապետող եկեղե-
ցուն պատկանող անդամներին,
յետոյ երդման ձեզ յարմարեց-
րին կաթոլիկներին, Ժամանակով
նրան մատչելի դարձրին և բողո-
քական այլ և այլ աղանդների
ներկայացուցիչներին, — վերջապէտ
և Հրէաներին թոյլ տուեցին ի-
րանց կրօնական երդումը յարմա-
րեցնել ընդհանուր քաղաքական
երդմանը, իսկ այժմ՝ մնում է դար-
ձեալ մի քայլ անել քաղաքական
և կրօնական համբերողութեան

Ճանապարհի վրա, այսինքն թոյլ
տալ և անհաւատներին իրանց
ձեմ երդում տալ: Ճողովուրդը
ընտրել է Բրեգլո պատգամաւո-
րին, ասեց Գլադստոն, և մենք ի-
րաւունք չունենք նրան չընդունելու
իրաւունք չունենք թոյլ չը տալ
նրան այս կամ այն կերպ երդում
տալու, հաւատացող է նա թէ
անհաւատ է, մեզ փոյթ չէ. մենք
մարդկերանց կրօնական համոզ-
մունքները ըննադատելու համար
կանչփած չենք այստեղ, այլ երկրի
քաղաքական ներկայացուցիչներ
ենք:

Գլադստոնի ճառը ահագին տը-
պաւորութիւն գործեց, մեծամա-
նութիւնը ոգևորված կերպով ծա-
փահարում էր նրան, բայց այնու
ամենայնիւ, երբ քուէարկեցին
խնդիրը, մեծամանութիւնը հակ-
վեցաւ ընդդիմադրութեան կողմը:
275 ձայն 230 ձայնի դէմ վճռե-
ցին, որ Բրեգլո, եթէ կամենում
է պատգամաւոր ընդունվել, պէտք
է կրօնական երդում տայ, և նը-
րան մերժեցին փոխարինել կրօ-
նական երդումը քաղաքական եր-
դումով: Երեսում է որ մեծամա-
նութեան հետ միացան մի քանի
իրլանդացիներ, մի քանի մոլեռանդ
կաթոլիկներ, որոնք ուրիշ հար-

ցերում մինխստրութեան հետ էին
քուէարկում։

Արէդլո դժգոհ մնաց այդ վրձ-
ռից և ինքն ներկայացաւ հա-
մայնքների ժողովի դահլիճը։ Նրա
ասած ձառը այնու ամենայնիւ
գործին չօգնեց և նրան յայտնե-
ցին որ իրաւունք չի ունենայ նրա-
տել պատգամաւորների նստարանի
վրա։ Այն ժամանակ Կօրտամպ-
տօնի պատգամաւորը յամարձա-
կապէս յայտնեց որ հեռանալու
չէ դահլիճից և որ կատարեալ ի-
րաւունք ունի պատգամաւոր լի-
նել, որովհետև ժողովրդի ձեռքով
է ընտրված, ինչպէս և միւս բո-
լոր պատգամաւորները։ Համայնք-
ների ժողովը իր վճիռը կատարել
տալու համար, տեսնելով Արէդ-
լի կամակորութիւնը և օրէնքնե-
րին չը հնազանդվելը, ստիպվեցաւ
մի աւելի էլ խիստ որոշում անել։
Արէդլո դատապարտվեցաւ բան-
տարկութեան։ Բայց երկու օրից
յետոյ պարլամենտը ազատեց նր-
ան բանդից և Արէդլո կրկին
ներկայացաւ համայնքների ժողովը
իր իրաւունքները պաշտպանելու
համար։

ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

I.

Թիւրքաց Հայաստանի սովատաննէրի զրութիւնը—Որտեղ է աւելի տարածված սովը:—Տեղեկութիւններ կ. Պօլսի կենտրօնական մասնաժողովի:—Սովի պատահական պատճառներ, արտակարգ բնական երևոյթներ և հացի պաշարի պատճելը Հայաստանում մինչև վերջին պատերազմը և պատերազմից յետոյ:—Հարկեր:—Թափառական ցեղեր և աւաղակութիւններ:—Մշտական պատճառներ, հողային յարաբերութիւններ և բէկերից Կախված լինելը:—Ճանապարհների բացակայութիւնը:—Հայերի թփի պակասելը և գաղթականութիւնների պատճառները:—Կայսերի և մեթալիքի վերցվելը շրջտրերութիւնից, հաց բերելու արգելքը և այլն:—Կ. Պօլսի և վանի մասնաժողովները:—Ռուսաստանից եկած օգնութիւնը:

Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնից միայն
հայ տարրն է աշխատասէր և արդիւնաբերող,
թիւրքը ծոյլ և անհոգ է, քիւրդը յափշտա-
կիչ և ձրիակեր է: Բայց պետական հարկե-
րի ամբողջ ծանրութիւնը հայերն են կրում: Բացի
սորանից, թէն քրիստոնեանները թիւրքիայում հօգի-
սեփականութեան իրաւունք ունեն, բայց իրապէս
թէ յափշտակութեան, կամայականութեան և թէ
թիւրքու քիւրդ կալուածատէրկրից կախված լի-

նելու պատճառով և թէ այն պատճառով որ հայը
քիւրդ և թիւրք բէյերի պարտական է դարձել,
նա կորցրել է գրեթէ ամեն տեղ իր հայրենիքում
հողի սեփականութեան իրաւունքը և այնտեղ է
հասել որ իր հողերի միայն կ ապա լառու է
դարձել։ Ուրեմն արդիւնաբերութեանը անընդունակ
տարիերը հողի սեփականատէր են, իսկ ազգաբնա-
կութեան աշխատասկը և արդիւնաբերող մասը,
հայերը, զրկված են հողից. Մուծ մասամբ հայերի
ձեռքով մշակվող հողերը վարձված հողերն են։

Անցեալ տարի իմ կարգացած զասախօսութեան
մէջ ես նկարագրեցի ինչքան ծանր և ինչ բազմա-
տեսակ հարկեր է վճարում հայը թիւրքաց պետա-
կան գանձարանին և թիւրք կամ քիւրդ բէյերին,
որոնցից նա կախված է, *) Այլ ես չեմ խօսում
պաշտօնեաների ձեռքով դրոձված անկանոնու-
թիւնների, յափշտակութիւնների ու կամայակա-
նութեան մասին, չեմ խօսում նրանց կաշառակե-
րութեան մասին, չեմ խօսում երկրի անապահով
դրութեան մասին կիսավայրենի ցեղերի աւագա-
նութեան մասին և այլ պահանջման մասին։

դիմաքերի, այդ աւելին պէտք է փոէք պահեստաներում, որպինետև նա ոչ ծախել կարող է իր հացը մօտակայ տեղերում, ոչ տանել վաճառանոցը գաւառից գաւառ, նահանգից նահանգ, ոչ էլ վաճառահանել երկրից զուրս: Պատճառը շատ պարզ է. ոչ մի տեղ օրինաւոր ճանապարհներ չեն կան ամբողջ թիւրքաց Հայաստանում: Եթէ հաց դիւղացին իր աւելորդ արդիւնաբերած հացը տանի մի գաւառից միւս գաւառը ծախելու, ճանապարհի ծախսը այնքան մեծ կը լինի, որ իր հացի պաշրի գինը չի հանի: Եթէ տարաւ էլ, ծախսեց էլ, —վերադարձին կը կողոպտվի աւազակներից, ինչպէս այդ պատճառում է այն գաղթական հայ մըշակների հետ, որոնք մեղ մօտ կովկասում աշխատելուց յետոյ և քիչ գումար տարիների ծանր աշխատանքով գաստակելուց յետոյ, վերադառնալով իրանց հայրենիքը, թիւրքաց Հայաստանը, շատ անդամ թիւրքաց սահմանը ուսքը կոխելուն պէս, կողոպտվում են և տաղիներով գաստակածը մի րօպէում կորցնում են:

մինչև անգամ ամենաստոր պաշտօնների մէջ, գայ-
մազամի կամ միւղիրի պաշտօնի մէջ երբէք մի
հային չէ նշանակում, չէ սանձանարում պաշտօ-
նեաների կամայականութիւնը և կաշառավերու-
թիւնը, նոր և արդար օրէնքներով չէ կարգադրում
հողային յարաբերութիւնները Հայաստանում, ու-
շագրութիւն չէ դարձնում ծանր և անտանելի հար-
կերի վրա, —և այդ բոլորի հետահնքը այն է լի-
նում, որ հայ ազգաբնակութիւնը տնտեսական և
վարչական ճնշման տակ թւռվագում է, գիւղացին կամ գաղթում է իր հայրենիքից,
կամ թողնում է իր գիւղական կեանքը և ապա-
տանվում է քաղաքներում, որտեղ սկսում է
պարապել արհեստներով և մանրավաճառութեամբ:
Այդպիսով հայը, ոչ թէ իր սեփական կամքով,
այլ հանգամանքների չնորհով, արուեստական ճնշ-
ման պատճառով դաւաճանում է իր կոչմանը, գիւ-
ղական կեանքին, երկրագործական պարապմունքին
և դառնում է վաճառական, —և հողը Հայաստա-
նում զրկվում է իր աշխատամէր և լնդունակ բը-

Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնից միայն
տարբն է աշխատասէր և արդիւնաբերող,
ուրքը ծով և անհոգ է, քիւրդը յափշտա-
և ձրիակեր է: Բայց պետական հարկե-
ամբողջ ծանրութիւնը հայերն են կրում: Բացի
անմիջ, թէն քրիստոնեաները թիւրքիայում հօգի-
ֆականութեան իրաւունք ունեն, բայց իրապէս
յափշտակութեան, կամայականութեան և թէ
ուրքու քիւրդ կալուածատէրերից կախված լի-

^{*)} **Sru** «**Uzmaq**» № № 72, 73, 74, & 75, 1879.

քերը լուանալով յետ է քաշվում և հանգստա-
նում է, յուսալով որ նա իր պաշտօնը լաւ կը կա-
տարէ: Բայց ես դրա վրա կաւելացնեմ և այն, որ
մեր հասարակութիւնը գործի համար կառավարիչ-
ներ ընտրել էլ չը գիտէ: Մի լաւ նայենք մեր հո-
գևոր դպրոցների նորընտիր 6 հոգաբարձուների
վրա. այս 6 հոգաբարձուներից, որոնք պիտի կա-
ռավարեն հայոց դպրոցները, ոչ մէկը չը գիտէ հա-
յերէն, ինչպէս խոստովանել են, չատ ժամանակ
չէ, իրանց բերանով և խնդրել են առաջնորդից ի-
րանց գործակից այն քահանային, որ, ամենին
յայտնի է, թէ տաս տարվայ մէջ Բնչ բերաւ խեղճ
ուսումնարանների գլխին, որին առաջնորդը արտա-
քսելով դպրոցի պաշտօններից գրել էր, «բարձր
ամբարիշտն ի միջոց». այժմ կրկին այս նորընտիր
հոգաբարձուների թախսանձանքին զիշանելով, կար-
գել է նոյն պաշտօնի մէջ: Բացի գորանից հոգա-
բարձական բաղկացութեան մէջ, 4 բարձր ուսումն
ուսացած երիտասարդների կարգում, տեսնում ենք
և մի ոստիկանապետի օգնական և մի վաճառա-
կան, որ տարվայ մեծ մասում իր օրերը անց է
կացնում ձկնորսների և ծովահորթ որսողների հետ
և հետևաբար այստեղ, հոգաբարձական պաշտօ-
նումն էլ, իր գործունէութեան ամեն մի քայլափո-
խը իր վաղեմի սովորական գործի ձևով հարկաւ
պիտի չափէ: Ես այս ասելով՝ այդ անձներին եր-
բէք միտք չունեմ պախարակելու. ես առաջնին
ճանաչում եմ իրը և շատ ընդունակ մարդ իր բուն
պօլիցիական պաշտօնի մէջ, իսկ երկրորդի համար
խօսք անգամ չը կայ: Անցեալ ժողովներից մէկում,
երբ նա իրը և երեցիոխան հաշիբ էր առաջար-
կում իր վեց տարվայ կառավարութեան մասին,
հասարակութիւնը տեսնելով նորա սոկեղէն և ար-
ժաթելէն պատկերների մեծաքանակ նուիրատու-
թիւնը, այնպէս ոգեսորվեցաւ, որ առանց մի յանձ-
նաժողովի յանձնելու նորա հաշիների քննութիւ-
նը, ովսաննա աղաղակելով կրկին ընտրեց նո-
րան երեցիոխան, և բազմաստորագիր չորհա-
կալութեան թերթ կազմելով, առաջարկեց նորան,
իրը և պապական թողութեան կոնդակ պապայ ա-
զատ գործունէութեան համար: Բայց և այնպէս
չեմ կարող գաղափարների համեմատութիւն գրա-
նել մի կողմից բարձր ուսումն ստացած երիտա-
սարդների և միւս կողմից պօլիցիական աստիճանա-
ւորի և վաճառականի մէջ, աւելացրու սրա վրա
և բարձրի հայերէն լեզուի գիտութիւնից գուրկ լի-
նելը—այն ժամանակ կը տեսնեմ, որ սապարէվը
դարձեալ մնում է, ինչպէս նամակիս ճակատում
յիշեցի, հոգեսորականին, և այն հոգեսորականին, որի
ուղղութիւնը և նպատակը մեղ ամենին քաջ յայտ-
նի է: Այստեղ իրաւունք ունի հասարակութիւնը
ինձ ասել, թէ ինչ անենք, անդադար գովում էք
ուսումնականներին, թէ նորա լաւ գործ կը կա-
տարեն, իսկ այժմ նրանց ընտրել ենք, ասում էք
հայերէն չը գիտեն: Իրաւ է հասարակութեան ա-
սածը, ես էլ կը խոստովանէմ, որ մենք ըստ ա-
մենայնի պատրաստ մարդիկ չունենք այսպիսի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻ

Մի քանի թիֆլիսաբնակ օտարական վաճառականները 1872 թուականում որչեցինք մեր ծախսերից մի մասը յետաձեղով, կազմել մի գումար, որի գործադրութիւնը ապագայում պիտի որոշվէր և այդպիսով նոյն 1872 և հետեւեալ 1873 թուականներում գոյացաւ մի գումար, որ գտնվում է ինձ մօտ իբրև գանձապահի։ Այդ գումարի տոկոսը, հաշւելով մինչ 1878 թուականի մայիս ամիսը, գոյացնում է 70 ր. 45 կ., որից 25 ր. արդէն խմբագրութեանդ միջոցաւ նուիրած եմ «Արարատեան ընկերութեան» (հրատարակած «Մշակի» 1878 թուի 223-րդ համարում), այժմ ևս մնացեալ 45 ր. 45 կոտեկ այսու հանդերձ ներկայացնելով ձեզ յօդուած վանի սովատանջների, իրնդրում եմ հասուցանէք ըստ պատկանելոյն և ներկայ ծանուցագիրս հրատարակէք «Մշակի» միջոցաւ ի գիտութիւն այն անձաց, որոնց կը վերաբերի այս։

Ա. Ռոստոմեանց

ԵՐԻՎԱՆ ՀԱՅՈՒԹ

քերը լուանալով յետ է քաշվում և հանգստառամբ է, յուսալով որ նա իր պաշտօնը լաւ կը կատարէ: Բայց ես դրա վրա կաւելացնեմ և այն, որ մեր հասարակութիւնը գործի համար կառավարիչներ ընտրել էլ չը գիտէ: Մի լաւ նայենք մեր հոգևոր գլուխոցների նորընտիր 6 հոգաբարձուների վրա: Այս 6 հոգաբարձուներից, որոնք պիտի կառավարեն հայոց զպրոցները, ոչ մէկը չը գիտէ հայրէն, ինչպէս խոստովանել են, շատ ժամանակ չէ, իրանց բերանով և խնդրել են առաջնորդից իրանց գործակից այն քահանային, որ, ամենին յայտնի է, թէ տաս տարվայ մէջ բնչ բերաւ խեղճուսումնարանների գլխին, որին առաջնորդը արտաքսելով զպրոցի պաշտօններից գրել էր, «բարձրցի ամբարիշտն ի միջոց»: Այժմ կրկին այս նորընտիր հոգաբարձուների թախսանձանքին զիշանելով, կարգել է նոյն պաշտօնի մէջ: Բացի գորանից հոգաբարձական բաղկացութեան մէջ, 4 բարձր ուսումնատացած երիտասարդների կարգում, տեսնում ենք և մի ոստիկանապետի օգնական և մի վաճառական, որ տարվայ մեծ մասում իր օրերը անց է կացնում ձկնորսների և ծովահորթ որտողների հետ և հետեւաբար այստեղ, հոգաբարձական պաշտօնումն էլ, իր գործունէութեան ամեն մի քայլափոխը իր վաղեմի սովորական գործի ձևով հարկաւ պիտի չափէ: Ես այս ասելով այդ անձներին երբէք միտք չունեմ պախարակելու, ես առաջնորդ հանաշում եմ իրեն երեցփոխան հաշիբ էր առաջնորդ իր վեց տարվայ կառավարութեան մասին, հասարակութիւնը տեսնելով նորա սոկելէն և արծաթելէն պատկերների մեծաքանակ նուիրատութիւնը, այնպէս օգնորդեցաւ, որ առանց մի յանձնաժողովի յանձննելու նորա հաշիւների քննութիւնը, ովսաննա աղաղակելով կրկին ընտրեց նորան երեցփոխան, և բազմաստորագիր չնորհակալութեան թերթ կազմելով, առաջարկեց նորան, իրեն պապական թողութեան կոնդակ պապաց աղատ գործունէութեան համար: Բայց և այնպէս չեմ կարող զաղափարների համեմատութիւնը գըտնել մի կողմից բարձր ուսումնատացած երիտասարդների և միւս կողմից աղօլիցիական աստիճանաւորի և զամառականի մէջ, աւելացրու սրա վրա և բոլորի հայերէն լեզուի գիտութիւնից զուրկ լինելը—այն ժամանակ կը տեսնես, որ ասպարէվը դարձեալ մնում է, ինչպէս նամակիս ճակատում յիշեցի, հոգեսորականին, և այն հոգեսորականին, որի ուղղութիւնը և նպատակը մեղ ամենին քաջ յայտնի է: Այստեղ իրաւոնք ունի հասարակութիւնը ինձ ասել, թէ բնչ անձնոք, անդադար գովում է քուսումնականին, թէ նոքա լաւ գործ կը կատարեն, իսկ այժմ նրանց ընտրել ենք, ասում է ք հայերէն չը գիտեն: Իրաւ է հասարակութեան ասածը, ես էլ խոստառականին, որ մենք ըստ աշխարհաբանութիւնում է և գրականութիւնում աղքատ: Իրաւ է, կան լրագիրներ, «Մշակ», «Մեղու» և ուրիշներ, բայց նոցա մէջ էլ կարդալու բան չը կայ, պատճառ օտարագալաքացի հայ երացաց գրութիւնը մեր երիտասարդ պարոնների ամեննեին չէ հետաքրքրում, իսկ արտասահմանից—Եւրօպայից եկած տեղեկութիւնները չէ որ նորա ուսացաց լրագիրներումն էլ են կարդում, որոն կրկնապատիկ աւելի էժան են և հեշտ հասկանալու նոցա բժայցած գուշների համար: Միթէ այս ամենին բանից յետոյ մենք դարձեալ ձեռները կուրծքերի սրած պիտի ասենք, հայ ենք արդեօք բաց հայութեան անունից մի այլ յատկանիշ կայ մենք վրա: Գոհ պիտի լինենք մեր 1500 տարվայ մինչ մողեանդութիւնը հասած կրօնասիրութիւնից, որ չորդով մեր եկեղեցները կանգուն և զարդարանք ենք տեսնում այսօր: Բացի սոցանից ուրիշ բնչ բարեկարգ հասառատութիւն ունենք, բնչ սիմմարկութիւն ունենք, որը մեր ընդհանուր միացած ուժերով ենք պահպանում: Ի հարկէ պէտք ցոյց տաք մեր կիսաւեր զպրոցները, որոնց վերանդումն մասին մենք չենք մտածում, բայց այդպրոցները վերը յիշած մեր կրօնասիրութիւնի աղբերացած եկեղեցական գումարներով կամ մասնաւոր մարդուց նուիրած անշարժ կալուածով են պահպանում: Իրաւ է, ունենք աղքատանոց արդարական դաստիարակութիւնը մեր, ասաւահանցներիս համար մի չը տեսնուած բարեգործական եռամուդ ցոյց տուինք, հանդանակութեամբ նուիրելով յօդութականից: Անցեալ 1100 րուբը գումար այս, այդ մի գովելի և ուրախալի երեսոյն էր, սա մի վաեմ պարտաւորութիւն էր, որ մենք կատարեցինք: Բայց մենք ուրիշների պակասութիւնը հոգարով արդեօք մեր պակասութիւնը էլ հոգացինք, տեղեկացմանք, թէ այս տարի թանգութեան և սաստիկ ցրտի պատճառով որքան մարդիկ մեր քաղաքում օրական հայի կարօտ կիս և որքանը առանց փայտի էին մնացած: Մենք սովորութիւն ունենք ժողովների մէջ բարձրաձայն գուալ, թէ այս ենք կամենում, այն ենք կամենում, բայց հարցնում եմ, կայ մեր մէջ մի հասարակաց արկղ, որի մէջ հաւաքված գումարի տակարդ կարողանակնք գործ դնել պէտք եղած ժամանակ: Անցեալ մեր ժողովներից մէկի մէջ առաջարկութիւն եղաւ, որ զիմնապիշների հայոց կրօնի և լեզուի ուսուցիչներին ուոճիկ յատկացնիք բայց ոչինչ զլուս չեկաւ, ինչնու, որովհետեւ կար մի հասարակաց գումար, որից նշանակէին ուոճիկը, այսպէս էլ շատ ուրիշ բաներ: Իսկ այս բուրի պատճառը այն է, որ մենք հասարական կեանքով չենք ապրում: Եթէ այսպէս է, էլ չը պէտք է վիրաւորվենք, երբ տեսնում ենք, որ մենք իշխում են աղաներ և հոգեսորականներ:

բունուն ցէնզուրական դատի պատճառով 50 բուրգ
տուգանքի, կամ 10 օրվայ բանտարկութեան: Այժմ
Գրիգոր Արծրունի ապէլացիա (գանգատ) է տուել
Սուդէբնայա Պալատա, Նահանգական դատարանի
այդ գնուի դէմ:

«Մօլեա» լրագիրը ասում է: «Ներկայ թագաւո-
րութեան ժամանակ ուսւա ազգը ազատվեցա-
մարմնաւոր ստրկութիւնից: Ճորտերի ազատութիւ-
նից յետոյ պէտք է ազատել մեզ և մտաւորապէս
ու բարոյապէս, այսինքն տալ տպագրական ա-
զատութիւն:»

Ստոցանք Պ.Զ.Ա.ԲԻՑ, պ. Կաճկանձեանից, 85
բուրլ յօդուտ Հայաստանի սովատանչների: Այդ
գումարը ստացանք ալիկին Կաճկանձեանից ձեռ-
քով:

Գաւառական մի քաղաքից ստացանք հետեւալ
տողերը: «Սպասում ենք «Մշակի մէջ ձեր խոս-
տացած դասախոսութիւնը «Հայաստանի սովի մա-
սին» կարդալու: Թող թիֆլիսի լուսաւորված
ամբ ուսը չը գայ լսելու Հայաստանի մասին դա-
սախոսութիւնը, նա ամեն բան հասկանալու ըն-
դունակութիւնը կորուսել է, կարծեօք, փոյթ չէ:
գաւառաները կը կարդան և արձագանք կը տան:»

«Ոլօտե» լրագրի մէջ կարդում ենք հետեւալը:
«Բերլինի կօնքերենցիան, որ այժմ քննում է
թիւրք-յունական սահմանների խնդիրը, ինչպէս
յայտնի է, վճռեց չը քննել միւս այն հարցերը,
որոնք չեն վճռվել Բերլինի կօնքրէսի ժամանակ,
այլ յայտնել Թիւրքիային, որ նրանց վճռելը անհրա-
ժեշտ է: Այդպիսի հարցերից մէկը Թիւրքաց Հա-
յաստանի կազմակերպութիւնն է, որի գրութիւնը,
վերջին տեղեկութիւնների համեմատ, անտանելի է
դարձել Բ. Դրան պաշտօնեանների անտարքերու-
թեան պատճառով, որոնք չեն կամենում կամ
անկարող են պաշտպանել աշխատասէր և գրծու-
նեայ հայ ազգին քիւրդերի բոնաբարութիւններից
և կողոպտումներից, որոնք ենթարկում են հայերին
ամեն տեսակ տանջանկներին: Քանի որ ալբանցի-
ների անշան խումբը ինքնավարութիւն, մինչեւ
անգամ անկախաւութիւն է պահանջում Թիւրքիայից,
այս պետութիւնը չէ կարողանում ապահովեցնել
հայերին, որ հէնց եգուց քիւրդերը նրանց գլխովին
չեն կոտորի: Գործերի այսպիսի գրութիւնը երկա-
րատե չէ կարող լինել, մանաւանդ որ հայերը յի-
շում են իրանց նախսկին այն բարօրութիւնը, որ
նրանք վայելում են հայոց թագաւորութեան ժա-
մանակ, ձշմարիտ է, որ այդ թագաւորութեան
պատճութեան մէջ ծանր ժամանակներ են եղել:
Այդ ժամանակներից մէկը զեղեցիկ կ'րպու նկա-
րագրել է պ. Ախվերդով «Հայաստանը հինգերորդ
դարում» վերնագրով էր հեղինակութեան մէջ:
ձշմարիտ որ դա եղել է հայոց պատմական կեան-
քի ամենածանր և շփոթալի ժամանակը, որի ըն-

պէս Նւրօպան կը սարսափի և ստիպված կը
յինի մեզ կանգնեցնել մեր առաջադէմ ձանա-
պարհի վրա։»

Թիւրքաց «Վակիթ» լրագիրը թողնելով
քաղաքական հարցերը դիմում է կրօնական
հարցերին և իր յօդուածներով կասկածել է
տալիս որ լրագրի խմբագիրը փոքր ի շատէ
խելագարվել է։ Երբ «Թէրջեմանը Հաքիքաթ»
լրագիրը հաւատացնումէր որ քիւրդերը լու-
սաւորված ազգ են և որ մինչեւ անգամ նրանք
աւելի լուսաւորված են քան թէ հայերը, —
ամենքը ծիծաղեցին այդ յօդուածի վրա։
Բայց այդ դեռ բաւական չէ։ Այժմ նոյն
լրագիրը հաւատացնում է որ քիւրդերն են
տարածել լուսաւորութիւնը նւրօպայում։

«Վակիթ» աւելի էլ մեծ խելագարութեան
նշաններ է ցոյց տալիս։ «Temps» լրագիրը
պատմում է որ «Վակիթ» իր վերջին համա-
րում յորդորում է թիւրք հոգևորականներին
գնալ որպէս միսիօնարներ Գերմանիա և քա-
րոզել գերմանացիներին մահ մետականու-
թիւն։ Միայն մահմեականութիւնը կարող
է ազատել խելզ գերմանացիներին, ասում
է թիւրք թերթը, կրօնական երկպատակու-
թիւններից։ Ժամանակ է արդէն փրկել Գեր-
մանիային, բացականչում է «Վակիթ», Գերմա-
նիային որ մեղ բարեկամ է և տարածել նրա
մէջ իսկական կրօնը, որ միակ զարգացուցիչ
և անհատացնող է։ պէտք է վերջապէս
վայելի տալ գերմանացիներին իսկական
կրօնի բարիքները։ Ողորմելի, խելագար թեր-
թը մոռանում է ցոյց տալ թէ ո՞ւմ հաշով
թիւրք ուշիմները պէտք է ճանապարհ ընկնեն
դէմի Գերմանիա և ո՞ւմ հաշով ապրեն այն
թէև վայրենի, բայց բարեկամական երկրում,
իսկական կրօնի միսիօնարներ գառնալով։

Ոչ ոք չէր սպասում որ թիւրքերը կարող
են հասնել մինչեւ այդ տեսակ խելագարու-
թեան։

Յօդուածի վերջը մի ուրախալի լուր պէտք
է յայտնենք։ «ГОЛОСЪ» լրագրի Կ. Պօլսի
թղթակիցը պատմումէ, որ Յունաստանի մայ-
րաքաղաքի, Աթէնքի Կարմիր Խաչի ընկե-
րութիւնը ուղարկել է նորերումն Կ. Պօլսի
հայոց պատրիարքին 2500 ֆրանկ, խնդրե-
լով հասցնել այդ գումարը Կ. Պօլսում յօդուած
Հայաստանի սովատանջների հիմնած կենտ-
րօնական մասնաժողովին։ Դորանից յետոյ
որբազան Ներսէսը շնորհակալութեան նամակ

է գրել յունական և Կարմիր Խաչի ընկերութեան նախագահին, ասելով որ Հայոց ազգը երախտապարտ է յոյներին իրանց եղբայրական զգացմունքի համար դէպի Հայերը և Հայոց եկեղեցին իր կողմէց աղօժք է անում Աստուծուն յունաց ազգի բարօրութեան և բարգաւաճման համար:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ 24 յունիսից: «Рус. Известиях» լրագիրը հերքում է «Times»-ի հաղորդած լուրը՝ չինացիների և ռուսների մեջ եղած կոխների և ռուսների յաղթվելու մասին, այդ լուրերը սուտ է անուանում և ցանկութիւն է յայտնում չը հաւատալ այդպիսի լուրերին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՐՆԵՐ

Մօցթօքի

Հայոց օրիորդաց գողոցի համար
պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻՇԻ նպաստաւոր
պայմաններով։ Յանկայաղները կարող են զի-
մել «ՄԾՈՒՅԻ» խմբագրատանը սպայմանների
մասին բանակցելու համար։

2-10

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻՔԻ Հ-ՈՐԴ ՏԵՍԱ

Պատրաստված մաքուր ցորենից առանց
թեփի, բերված է նյսկից և ծախզում է
Կուկիայում նոր բացված պահեստում, Նվա-
զավիշտինսկի փողոց, տուն Քանանօվի, Փօթիս-
թի Փլիսեան երկաթուղու վարչութիւնից ոչ
չեռու; Նոյն տեղ ծախզում է նոյնպէս նյա-
կից բերած և Փօթիում պահվող 5000 պուդ
մաքրված զարի:

1—5 (2)

Ա.Ա.Կ.Ա.Ն զպրոցի 6-դ դասաւան Ա.Շ.Ա.
ցանկանում է մասնաւոր Գ.Ա.ՍԵՐ ունե-
լ ՊԱՏՐՈՍԵՒ, երեխաներին այդ զպրոցի
աշխատ ԴԱՍԱՑՈՒՆՆԵՐԻ Համար՝ Հասցէն
իվ Խմբագրաւանը:

2—2 (2)

Տուտով մասն լի տակից լցո կը տեսնեն
Պետքուրզի ֆրեօրելեան ընկերութեան
Հետեւեալ հրատարակութիւնների հայերէն
թարգմանութիւնները:

Դ. Ե. Կիրակոս «ԵՐԻՄԻ ԽՈՎԻ» Ա. Գևորգ
Քիւսի «ԸՆՉՆ Է ԽՈՍՈՒՄ ՍԵՆԵԿԱԿԻ» III.
Սմբակնովի «ՃԱՐԹԱԲԱԾ» Գործանցից մէկը
առանձին մասնութիւնակ է:

18—20

ПО СЛУЧАЮ СТЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константи^н
Макаровичъ Орбеліани объявля-
етъ, что продаетъ оставшееся
послѣ смерти отца, Макарія Ор-
беліани, имущество, именно: трехъ-
этажный домъ на Головинскомъ
проспектѣ, съ флигелями, гдѣ
помѣщается гостиница «Россія»,
и имѣнія въ Тифлісской губерніи
и уѣздѣ, именно: деревня Геуа-
ры, населенная жителями, 4,174
десят., Вашлеванъ—450 деся-
тинъ, съ садами, домомъ и при-
стройками; дача въ Коджорахъ,
домъ и земля $2\frac{3}{4}$ десятины;
лѣсъ сосновый, строевой и дубо-
вой 3,100 десят. въ Локскомъ
ущельи, Шулаверскаго уѣзда,
около Чатахскаго завода; имѣніе
на Мокрыхъ-горахъ, около моло-
канскаго селенія Воронцовки, подъ
названіемъ Каракала—5,500
десят. Всѣ имѣнія обмежеваны и
имѣются планы; коляска, фаэтонъ,
верховые лошади, баранта и ро-
гатый скотъ.

1-3

Համեմատեցէք անդիխական խանութիւն
գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40
1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Փունտի հայն
այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութիւն
բում 30% -ով թանգ են ծախսիւմ և
խանութիւն փունտը բուրլիանոց թէյը
րիշ տեղ 4 ր. ծախսող թէյի հետ:

20—100

ՀԱԳՈՒՍՏՄՆԵՐԻ երեխանների 4 ր., տղամարդկանց
կերպաց 9—20 ր., ամբողջ հազուսար, պիտի
ջակ 5 ր., ՈՒՏԵԼ է ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹՅՈՒՄ: Բանագլէյ, պարուսինն
տրիկօ, դրազ, փոստի թուղթ, թաւիչ կա-
րասիքի և կառքերի համար, կայիննօր և
այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ համեզ մուրաբաններ, կոն-
ֆետներ հազե դէմ, պանիր, մազգնեղիա, ա-
մաններ, կարբովիան փօշի, սալոնի, պարսիկա-
կան փօշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շա-
պարանքներ կարելի է գտնել ԱՄԵՐԻԿԱ-
ԳՈՒՅԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ:

19-20

Дозволено Цензурою 25 Июня 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Մինելսոնի

Типографія А. А. Михельсона